



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2008 թ.

N 34

ք.Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԻ ՇԱՐՔ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Սահմանել, որ

ա) Պայթուցիկ նյութերի, տեխնոլոգիաների, սարքավորումների, տեղակայանքների եւ դրանց հետ կապված ծառայությունների, թմրադեղերի արտահանման եւ ներմուծման թույլտվությունը տալիս է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Առողջապահության բնագավառում օգտագործվող կարճ երաշխիքային ժամկետ ունեցող իոնացնող ճառագայթման աղբյուրների (սարքավորումներ, ռադիոակտիվ նյութեր, պատրաստուկներ) արտահանման եւ ներմուծման թույլտվությունը տալիս է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ արտահանման ժամանակ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ,

բ) «Բույսերի պահպանության համար քիմիական միջոցներ 38.08» ապրանքատեսակների ներմուծումը կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության տված եզրակացությունների հիման վրա,

գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուսաբանական հավաքածուների եւ առանձին նմուշների, վայրի կենդանիների ու կենդանաբանական հավաքածուների արտահանումն ու ներմուծումը կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից տրված թույլտվությունների հիման վրա:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շահագրգիռ մարմիններին՝ երկշաբաթյա ժամկետում մշակել սույն որոշման 1-ին կետով սահմանված եզրակացություն կամ թույլտվություն տալու կարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՐՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ